Խաղաղությունն իմ սրտում

Քերոլ Ֆ. Մակքոնկի
Երիտասարդ կանանց գերագույն նախագահության առաջին խորհրդական

Երբ ութ տարեկան էի, ես տեսա մարգարե Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյին (1873–1970)։ Նա եկել էր նվիրագործելու Եկեղեցու մի նոր շենք ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի Պալմիրա քաղաքում։ Իմ ընտանիքը գնաց նվիրագործմանը։ Շատ մարդիկ էին հավաքվել։ Մենք բոլորս շատ ոգևորված էինք, որ տեսնելու էինք մարգարեին։

Ես բավականին փոքրիկ էի, դրա համար էլ ինձ դժվար էր տեսնել թե ինչ էր կատարվում շուրջս։ Բայց ես, այնուամենայնիվ, կարողացա զգալ Նախագահ Մակքեյի սերը։ Ընդամենը մեկ րոպե ես տեսա նրա սպիտակ մազերը և բարի դեմքը։ Ես մտածեցի. «Ահա թե ինչպիսին է Աստծո մարգարեն»։ Ես կարդացել էի մարգարեների մասին սուրբ գրություններում, բայց սա առաջին անգամն էր, որ անձամբ տեսնում էի մարգարեի կամ որևէ Բարձրագույն Իշխանավորի։ Ես հասկացա, որ մարգարեներն իրական մարդիկ են։ Եվ նրանք սիրում են մեզ։ Ես միշտ կհիշեմ այն խաղաղությունն ու սերը, որ ես զգացի այդ օրը։

Երբ 11 տարեկան էի, ես ունեցա մեկ այլ փորձառություն, որն ինձ օգնեց խաղաղություն զգալ իմ սրտում։ Մոտենում էր ցցի համաժողովը, և ես պիտի երգեի ցցի երգչախմբում։ Ես այնքա՜ն ոգևորված էի։ Ես հագել էի գեղեցիկ սպիտակ վերնաշապիկ և ինձ առանձնահատուկ էի զգում։ Երգը, որը երգում էինք, գրված էր Հովհաննես 14.27-ի բառերով՝ «Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ։ Ձեր սիրտը չխռովի և չվախենայ»։

Այս բառերն իրոք հուզեցին ինձ, և ես հիշում եմ դրանք այդ ժամանակից ի վեր։ Երբ ես երգում էի այդ բառերը, ես գիտեի, որ դրանք ճշմարիտ են։ Ես զգացի, որ Սուրբ Հոգին ասում էր ինձ, որ Հիսուս Քրիստոսին հետևելն օգնում է մեզ խաղաղություն զգալ։ Այդ ժամանակից ի վեր ամեն անգամ, երբ ես դժվարություն եմ ունենում, իմ միտքն է գալիս այս սուրբ գրությունը և ինձ խաղաղություն բերում։ Ճշմարտությունը, որը ես սովորեցի, երբ երիտասարդ էի, օրհնեց իմ ամբողջ կյանքը։ ■

ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄԸ՝ ԷՄԻ ԲԵՅԹՍԻ